Կ. Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

Հայաստանի Հանրապետության երկրաբանական ծառայությունը կրեց մեծ կորուստ: Կյանքից անժամանակ հեռացավ Հանրապետության վաստակավոր երկրաբան, երկրաբանական հանքաբանական գիտությունների թեկնածու, Հայաստանի Հանրապետության ընդերքի պետական վարչության վառելիքաէներգետիկ արշավախմբի պետ Կորյուն Հակոբի Մկրտչյանը:

Կ.Մկրտչյանը ծնվել է 1928 թ. հուլիսի 20—ին Դիլիջանում, զինծառայողի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է Երեանի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում: 1946 թ. ընդունվել եւ 1951—ին գերազանցության դիպլոմով ավարտել է Երեանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը: Դեռ ուսումնառության տարիներին նա աչքի է ընկել իր աշխատասիրությամբ, խորը գիտելիքներով ու բարձր առաջադիմությամբ եւ ինքնուրույն գիտական արտադրական աշխատանք կատարելու նվիրումով:

1951թ. Կ.Մկրտչյանը աշխատանքի է նշանակվում Հայկական Երկրաբանական վարչությունում, ուր ծավալում է բազմատարր ու վաստակաշատ գործունեություն մինչեւ իր կյանքի վերջին օրերը: 1951—1954թթ. նա աշխատել է որոնողա—հետախուզական տարբեր ջոկատներում որպես երկրաբան, ավագ երկրաբան, գլխավոր ինժեներ, հետազոտել տուֆերի (Արթիկ, Աբինջ, Կարմրաշեն) եւ մարմարների (Մարմարասար) հանքավայրերը, տվել դրանց երկրաբանական բնութագիրը եւ պաշարները: 1954—1957թթ. եղել է երկրաբանահանույթային եւ որոնողական ջոկատի պետ, կատարել Հյուսիսային Հայաստանի հանքային շրջանների քարտեզահանումը:

1957—1968թթ. Կ.Մկրտչյանը վարել է Փամբակի երկրաբանահետախուզական եւ կոմպլեքսային արշավախմբի գլխավոր երկրաբանի եւ գլխավոր ինժեների պաշտոնները, ղեկավարել մի շարք օգտակար հանածոների (պղինձ, բազմամետաղ, ոսկի, երկաթ, բենտոնիտային կավեր, դոլոմիտներ եւ այլն) հանքավայրերի երկրաբանահանույթային, որոնողա—հետախուզական աշխատանքները, անձամբ կատարել է նաեւ թեմատիկ հետազոտություններ տեկտոնիկայի, մագմատիզմի եւ մետաղածնման փոխադարձ կապի հարցերի լուսաբանման, մետաղածնման քարտեզների կազմման բնագավառում: 1958—1961թթ. Իջեւանի բենտոնիտային կավերի գծով նրա կատարած աշխատանքների հիման վրա, կազմակերպվել եւ այժմ էլ գործում է "Իջեւանի բենտոնիտ" խոշոր կոմբինատը:

1968թ. անվանի երկրաբանը եղել է կոմպլեքսային արշավախմբի պետ, իսկ այնուհետեւ 1978—ից երկրաբանական—երկրաֆիզիկական արշավախմբի գլխավոր ինժեներ:

1976—1978թթ. Կ.Մկրտչյանը գործուղվել է արտասահման (ԵԺԴՀ), ուր ղեկավարել է խորհրդային երկրաբանների խումբը եւ զգալի աշխատանքներ է կատարել հազվագյուտ տարրերի, ոսկեբեր եւ այլ օգտակար հանածոների հանքավայրերի հայտնաբերման ու հետազոտման բնագավառում: Տարիներ հետո նրա կանխատեսած վայրերում իտալացիների կողմից հայտնաբերվել է նավթի հանքավայր:

1992թ. ապրիլից բազմավաստակ երկրաբանը հանրապետության Ընդերքի պետական վարչությունում կազմակերպել է վառելիքաէներգե-

տիկ արշավախումբ: Ելնելով մեր ժամանակների ծանր, ճգնաժամային պայմաններից, նա մեծ հմտությամբ կազմակերպում է ածխի հանքավայրերի որոնողա—հետախուզական աշխատանքները: Տեղին է հիշատակել, որ նա տարիներ առաջ նույնպես զբաղվել է ածխի (Ջերմանիս, Իջեւան) հանքավայրերի հետազոտությամբ եւ այն համարել է հեռանկարային բնագավառ:

Կ.Մկրտչյանը վարչության այն եզակի մասնագետներից մեկն էր, որ երկրաբանական, որոնողական—հետախուզական, քարտեզահանման բնագավառների մեծ գիտակ լինելուց զատ նաեւ կազմակերպված եւ հմուտ գիտնական հետազոտող էր: Իր բեղմնավոր ու արգասավոր գործունեության ընթացքում, նա ուսումնասիրել ու բարձրացրել է երկրաբանության շատ բնագավառների վիճելի, նոր գնահատման ու հաստատման արժանի հարցեր: Այսպես, դեռ առաջին տարիներին նա տվել է Հայաստանի չորրորդական տուֆերի ծագման, նորագույն տեկտոնիկայի հետ կապված խնդիրները: Առաջին անգամ Հայաստանում առանձնացրել է վերին եոցեն ստորին օլիգոցենի տրանսգրեսիվ, ֆաունայով բնութագրված շերտախումբը, հայտնաբերել եւ մանրամասն նկարագրել է ալկալային սիենիտների նոր ինտրուզիաներ, հաստատել պորֆիրային—քվարց—պորֆիրային, տրախիդացիտային մարմինների (յուրա, կավիճ, պալեոգեն) սուբինտրուզիվ բնույթը, որոնք նախկինում համարվում էին էֆուզիվ առաջացումներ, որով եւ ճշտվել են յուրայի եւ պալեոգենի շերտագրության շատ վիճելի հարցերը: Հարավային զոնայում տարածված օֆիոլիտային կոմպլեքսում նրա կողմից առաջին անգամ առանձնացվել է գլանաձեւ—խողովակաձեւ մետասոմատիկ բնույթի մարմիններ, որը հաստատում է վերին կավճի մագմատիզմի երկցիկլությունը եւ տեկտոնական ձեւերի ինքնատիպությունը:

Վաստակավոր երկրաբանը անգնահատելի ներդրում ունի Հայաստանի հնագիտության եւ գիտության պատմության բնագավառում: Հայտնաբերել եւ պեղել է Մեծամորի Լեռնամետաղաձուլական հնագույն կենտրոնը եւ աստղագիտարանը, հայտնաբերել ու մշակել է նյութական արժեքավոր մասունքները, հիմնել Մեծամորի գողտրիկ թանգարանը, ուր համատեղության կարգով աշխատել է որպես թանգարանի տնօրեն մինչեւ 1976 թվականը:

Կորյուն Մկրտչյանը թողել է հարուստ գրավոր ժառանգություն: Նա հեղինակ է շուրջ 40 տպագիր եւ 30—ից ավելի ձեռագիր աշխատությունների, հոդվածների, հաշվետվությունների, եզրակացությունների ու զեկուցագրերի, որոնք ընդգրկել են երկրաբանության ամենատարբեր բնագավառները:

Կորյուն Մկրտչյանը կարող էր դառնալ առաջնակարգ գիտական աշխատող կամ լավ դասախոս, սակայն նրա տարերքը արտադրությունն էր, մեր սարերն ու ձորերը, երկար ու դժվարին երթուղիները, դաշտային ծանր աշխատանքի քաղցրությունը, քարի ու հողի հմայքը, Հայրենիքին ծառայելու հավատն ու նվիրվածությունը: Նա ծնվել էր որպես երկրաբան, երկրաբանական էր նաեւ ընտանիքը կինը եւ երկու շնորհաշատ զավակները. ինչպիսի հազվադեպ երեւույթ: Կ.Մկրտչյանը սիրված էր բոլորի, այո, բոլորի կողմից, ուներ մաքուր խիղճ, մեծ սիրտ, ճկուն միտք, ժպիտը միշտ անպակաս էր, անմեղ էր մանկան պես, սակայն բուռն բնավորությունը եւ համեստությունը զարդարում էին նրան, որը գիտեր եւ վիճել, եւ համոզել եւ առաջինը հասնել վերջնագիծ: Սքանչելի Մարդ—գործընկեր էր, պայծառ բարեկամ, հրաշալի զրուցակից, վերջապես շնորհալի Ամուսին ու Հայր:

Կորյուն Մկրտչյանի պայծառ անունը եւ բարի ու անմոռաց հիշատակը երկար, շատ երկար կապրի մեր բոլորի սրտերում: